ԱՐԱԴ/0327/02/21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1 հուլիսի 2021 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Մեսրոպ Հովակիմյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործով ընդդատության մասին վեճը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու վերաբերյալ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի ապրիլի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Գործի դատավարական նախապատմությունը և ենթակայության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

1. «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը 2021 թվականի փետրվարի 2-ին հայցադիմում է ներկայացրել Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Մեսրոպ Հովակիմյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

2. Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) կողմից 2021 թվականի փետրվարի 11-ին կայացվել է

հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում:

3. Դատարանը (դատավոր՝ Մ. Մարգարյան) 2021 թվականի մարտի 25-ին որոշում է կայացրել պարզեցված վարույթը դադարեցնելու և գործն ըստ տարածքային ընդդատության ուղարկելու մասին՝ հետևյալ հիմնավորմամբ. *«(…) Դատարանը, ուսումնասիրելով գործի նյութերը, հաստատված համարեց, որ պատասխանող Մեսրոպ Հովակիմյանը բնակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում:*

(…) Նկատի ունենալով, որ պատասխանողը չի հանդիսանում ՀՀ Արագածոտնի մարզի բնակիչ, որպիսի հանգամանքը հայցադիմումը վարույթ ընդունելու պահին հայտնի է եղել, սակայն դատարանը տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ գործն ընդունել է վարույթ, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22, 24, 25 հոդվածների պահանջները՝ Դատարանը գտնում է, որ գործն ընդդատյա է ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանին»:

4. Թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործը 2021 թվականի ապրիլի 8-ին մակագրվել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Ոսկանյանին:

5. Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի ապրիլի 19-ի որոշմամբ գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ հիմնավորմամբ. *«ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Մարգարյանը սույն գործը տարածքային ընդդատության կարգով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ուղարկելու մասին 25.03.2021 թվականին կայացրած որոշման հիմքում դրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը և արձանագրել, որ գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ պատասխանող Մեսրոպ Հովակիմյանը բնակվում է «ՀՀ Գեղարքունիքի մարզի ք.Վարդենիսում», ինչը հաստատվում է նաև պատասխանողի՝ 20.03.2021 թվականին դատարան ներկայացված հետադարձ ծանուցումով, ուստի գտել է, որ նշվածը բավարար է գործն այլ դատարանի քննությանը հանձնելու համար՝ հաշվի չառնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի և 299-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու*

համար բավարար չէ միայն այն փաստը, որ պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրն ընդգրկվում է այլ դատարանի դատական տարածքում, այլ անհրաժեշտ է, որպեսզի պատասխանողը պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում առարկի գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Տվյալ դեպքում գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ պատասխանող Մեսրոպ Հովակիմյանը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ չի ներկայացրել առարկություն»:

6. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի ապրիլի 27-ին:

7. 2021 թվականի մայիսի 3-ին Վճռաբեկ դատարանի նախագահը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ միջնորդելով որոշելու, ի թիվս այլնի, նաև թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործի տարածքային ընդդատության վերաբերյալ վեճի լուծման կապակցությամբ կիրառման ենթակա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին համապատասխանության հարցը:

8. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի թիվ ՍԴԱՈ-123 որոշմամբ Վճռաբեկ դատարանի նախագահի դիմումի հիման վրա գործի քննությունը մերժվել է:

9. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի հունիսի 30-ին:

Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.

10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *առկա են արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ամրագրված՝ գործն ըստ ընդդատության այլ դատարանի քննությանը հանձնելու նախապայմանները՝ թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործը Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննության առնելու համար:*

11. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում բնակության*

վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի»:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ»:*

Օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ *«Դատարանները պարզեցված վարույթն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են 41-րդ գլխի դրույթներով»:*

Օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Գործին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում»:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը»:*

12. Նախորդ կետում վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի՝ արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են Օրենսգրքով սահմանված տարածքային

ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

13. Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության այլ դատարանի: Ընդ որում, նշված դեպքում գործն ընդդատությամբ այլ դատարանի հանձնելու համար բավարար չէ միայն Օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ գործը վարույթ ընդունելու փաստի առկայությունը, այլ անհրաժեշտ է նաև, որ պատասխանողը ներկայացնի իր առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ: Պատասխանողն իր առարկությունները կարող է ներկայացնել ոչ թե դատավարության ցանկացած փուլում՝ իր հայեցողությամբ, այլ՝ մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

14. Քաղաքացիական գործերի տարածքային ընդդատության վերաբերյալ վերը նշված կանոնները հավասարաչափ կիրառելի են նաև գործերի քննության պարզեցված վարույթի նկատմամբ՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են Օրենսգրքի 41-րդ գլխի՝ պարզեցված վարույթին վերաբերող կանոններով:

15. Պարզեցված վարույթում, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի, բացակայում են դատական նիստ հրավիրելու, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու օրենսդրական պահանջները: Գործին մասնակցող անձինք, այդ թվում՝ պատասխանողները, իրենց միջնորդությունները, ինչպես նաև իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են դատարան ներկայացնել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Օրենսդիրը, որպես բացասական հետևանք, նախատեսել է, որ նշված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Վերոգրյալից հետևում է, որ պարզեցված վարույթի շրջանակներում գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկությունը պատասխանողը կարող է դատարան

ներկայացնել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

16. Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ է արձանագրել, որ քաղաքացիական գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացնելու դեպքում գործն այլ դատարանի քննությանը կարող է հանձնվել ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել Օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ,

2. պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացրել է առարկություններ,

3. առարկությունները ներկայացվել են պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Միայն նշված երեք պայմանների միաժամանկյա առկայությամբ գործն այլ դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր փաստել, որ գործն ըստ ընդդատության ուղարկած դատարանը չի հանդիսանում այն իրավասու դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի արդարադատություն:

17. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- հայցադիմումում պատասխանողի հաշվառման հասցեն նշվել է՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Վարդենիս, Վ. Մանուկյան փ., տ. 9,

- 2021 թվականի փետրվարի 11-ին Դատարանը կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և պարզեցված վարույթ կիրառելու մասին որոշում,

- 2021 թվականի մարտի 25-ին Դատարանը որոշում է կայացրել քաղաքացիական գործն ըստ ընդդատության հանձնելու մասին:

18. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 11-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ սույն դեպքում թեև հիմնավորվում է, որ հայցադիմումն ի սկզբանե վարույթ է ընդունվել տարածքային ընդդատության կանոնների խախտմամբ, այդուհանդերձ, ինչպես արդեն վերը նշվեց, միայն այդ պայմանի առկայությունն ինքնին բավարար չէ գործն ըստ ընդդատության այլ դատարանի քննությանը հանձնելու համար: Անհրաժեշտ է նաև, որպեսզի պատասխանողը գործի տարածքային

ընդդատության վերաբերյալ ներկայացրած լինի իր առարկությունը՝ պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ, Դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում, մինչդեռ սույն գործում բացակայում են տվյալներն այն մասին, որ պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ որևէ առարկություն է ներկայացրել:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԱՐԱԴ/0327/02/21 քաղաքացիական գործն ըստ հայցի «Արդշինբանկ» ՓԲԸ-ի ընդդեմ Մեսրոպ Հովակիմյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ